Թբիլիսիի Հավլաբար թաղամասում գտնվող Գարի Դավթյան ընտանեկան տիկնիկային թատրոնի խամաճիկները իրենց տիրուհի Ժաննա Դավթյանի նախաձեռնությամբ երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ անցկացրեցին երեխաների հյուրընկալության շաբաթ:

Հունիսի մեկին տիկնիկային թատրոնի հյուրերն էին Թբիլիսիի թիվ 209 դպրոց-պանսիոնատի սաները: Այս էլ որերորդ անգամ նրանք, իրենց սիրելի ուսուցչուհի Նինա Տիգիշվիլիի հետ, հյուրընկալվում են այս զարմանահրաշ աշխարհում: Այս անգամ նրանց այցելությունը քաջածանոթ Դավթյան ընտանեկան տիկնիկային թատրոն, կապված էր իրենց տոնի նշանավորման հետ: Տիկնիկային թատրոնի տնտեսուհի Ժաննա Դավթյանը երեխաներին ընդունելու համար հատուկ էր պատրաստվել:

[redacted]